239

1939

2 0591
2-14

# 1939

# ՊԱՏԻ ՕՐԱՑՈՅՑ ՄՇՏԱՅՈՒՆ

## ՍՐԲԱԶԱՆ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐՈՎ ԶԱՐԴԱՐՈՒՆ

(ՆՈՐ ՏԱՐՈՒԱՅ ՅԱՐՄԱՐԱԳՈՅՆ ՆՈՒԷՐԸ)

Ը. ՏԱՐԻ

*Վերագիր 10*

150

Տարեգլուխն ձ




Ա կիրակի Ծննդ

*Ինն եւ տասներորդն 2*

*«Ես և Հայր իմ մի եմք»։ Յովհ. Ժ. 30։*

ԳԻՆԸ՝ ՍՈՒՐԻՈՅ ՀԱՄԱՐ 2.5 ՖՐ. ԱՐՏԱՍԱՀՄԱՆԻ ՀԱՄԱՐ 3 ՖՐԱՆՔ, ԱՄԵՐԻԿԱՑԻ ՀԱՄԱՐ 20 ՍԷՆԹ

* 

*Հասցէ.* — Gh. Der Ghazarian,
c/o Action Chrétienne en Orient
Place Djabrié, Alep — Syrie

2(059).
2-14
1201

# ՅՈՒՆՈՒԱՐ 1939 JANUARY

Ի Հօրէ ծագեցար լուսաւորիչ զարարածս, Արդարութեան Արեգակ, Տէր, Փառք Քեզ,
Ծնար ի յայրին, ընծայեցար Բեթղեհեմ, » » » » »
Հովուացն յայանեցար երկրպագելով ի մոգուց, » » » » »
Եւ մեք երգեսցուք որ ի կուսէն մարմնացար, » » » » »

| ԿԻՐ. SUN. | ԲՇ. MON. | ԳՇ. TUES. | ԴՇ. WED. | ԵՇ. THR. | ՈՒՐ. FRI. | ՇԲ. SAT. |
|---|---|---|---|---|---|---|
| 1* | 2 | 3 | 4 | 5 | 6++ | 7 |
| 8 | 9 | 10 | 11 | 12 | 13 | 14+ |
| 15 | 16+ | 17 | 18 | 19 | 20 | 21 |
| 22 | 23 | 24 | 25* | 26 | 27 | 28 |
| 29 | 30 | 31 | | | | |

## ՇԱԲԱԹԱԿԱՆ ՄՏԱԾՄՈՒՆՔԻ ՆԻՒԹԵՐ

— «Աստուած Իր Միածին Որդին ղրկեց որ Անոր միջոցով ապրինք»։ Ա. Յովհ. Դ. 9։
— «Քանզի Ած. անանկ սիրեց աշխարհը, մինչեւ որ Իր միածին Որդին տուաւ»։ Յվհ. Գ. 16։
— «Երբ ժամանակը լեցուեցաւ ղրկեց Աստուած Իր Որդին»։ Գաղ. Դ. 4։
— «Ահա՛ Աստուծոյ Գառը որ աշխարհի մեղքը կը վերցնէ»։ Յովհ. Ա. 29։

## ԵՐԳ ՍՈՒՐԲ ԾՆՆԴԵԱՆ ՓՐԿՉԻՆ

— Թող Սիօնի որդիք ընկրկին, Հնչեն փող յոբելեան.
Օծեալ անմահ Թագաւորին Երգեն երգ գովութեան:
— Ե՛լ Յուդայի վհատ աղջիկ, Ծաղկած են դաշտ արօտ,
Գլխուդ պսակ վարդէ փնջիկ Ճակտիդ կապէ նարօտ:
— Քեզ աւետիս, Սեղմ եկաւ, Հռչակէ Տէր ըզնա,
Քնար, շեփոր ու գոռ թմփեաւ Գոչէ միշտ Ովսաննա:
(Թարգ. Վեր. Ա. ՊԵՏԻԿԵԱՆ)

## ԿՐՕՆ. ԵՒ ԱԶԳ. ՏՕՆԵՐ

1. Կաղանդ (Տարեմուտ)
6. Ս. Ծնունդ Յս. Քս. ի
14. Սրբոյն Յովհ. Մկրտչի
16. « Պետրոս Հայրապետին
25. [illegible] (29 օր)
29. Առաջ. Բարեկենդան

ՊԵՏ. ԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ Гос Библиотека Арм ССР им. А. Мяс
38485-67
52596-Կ

# ՓԵՏՐՈՒԱՐ 1939 FEBRUARY

## ԽՈՍՏՈՎԱՆՈՒԹԻՒՆ

*ՍԲ. ՕԳՈՍՏԻՆՈՍԻ — «Մայրս արտասուքով կը փնտռէր զիս՝ ինչ որ արտասուքով ծնած էր, սակայն իմ կեղծաւորութեանս ու անզգութեանս վրայ գանգատելէ յետոյ, վերսկսաւ աղօթել ինձ համար»։*

| ԿԻՐ. SUN. | ԲՇ. MON. | ԳՇ. TUES. | ԴՇ. WED. | ԵՇ. THR. | ՈՒՐ. FRI. | ՇԲ. SAT. |
|---|---|---|---|---|---|---|
| | | | 1 | 2 | 3* | 4+ |
| 5 | 6 | 7 | 8 | 9+ | 10 | 11+ |
| 12 | 13 | 14+ | 15 | 16++ | 17 | 18 |
| 19* | 20+ | 21 | 22 | 23 | 24 | 25 |
| 26 | 27 | 28 | | | | |

## ՇԱԲԱԹԱԿԱՆ ՄՏԱԾՄՈՒՆՔԻ ՆԻՒԹԵՐ

— «Շատ բարի գործեր ցուցուցի ձեզի իմ Հօրմէս...»։ Յովհ. Ժ. 32։
— «Քրիստոս Յիսուսով ստեղծուած ենք բարի գործերու համար...»։ Եփես. Բ. 10։
— «Որպէսզի Աստուծոյ մարդը կատարեալ ըլլայ ամէն բարի գործերու համար»։ Բ Տիմ. Գ. 17։
— «Որ տեսնեն ձեր բարի գործերը ու փառաւորեն ձեր Հայրը որ երկինքն է»։ Մատթ. 5. 16։

## ԲԱՐԻ ՄԱՐԴԸ

— «Բարի մարդուն քայլերը Տէրոջմէն կը հաստատուին»։ Սաղմ. ԼԷ. 23։
— » մարդը կ'ողորմի և փոխ կուտայ»։ » ՃԺԲ. 5։
— » » իր բաները իրաւունքով կը կատարէ»։ » » 5։
— » » Տէրոջմէ շնորհք կ'ստանայ»։ Առակ. ԺԲ. 2։
— » » իր որդւոց որդիներուն ժառանգ կը թողու»։ » ԺԳ. 22։
— » » իր սրտին բարի գանձէն բարի բաներ կը հանէ»։ Մատթ. ԺԲ. 35։

## ԿՐՕՆ. ԵՒ ԱԶԳ. ՏՕՆԵՐ

3. Գուրպան պայրամ 4 օր
4. Սրբոյ Սարգիս զօրավարի
9. Պոլսոյ ժող. 150 հայրապետաց
11. Սբ. Սահակ Պարթեւ.

14. Սրբ. Ղեւոնդեանց
» Տեառնընդառաջ
16. Սրբ. Վարդանանց
19. Բուն Բարեկենդան
20. Մեծ Պահք

20. Ջերմ. իջանէ յօդս
23. Մուհարրէմ (30 օր)
24. Օր. եղբայրակց. յԱմերիկ.
27. Ջերմ. իջանէ ի ջուրս

# ՄԱՐՏ 1939 MARCH

### ԱՂՕԹՔ

ՍՈՂՈՄՈՆԻ ԽՆԴՐԱՆՔԸ — «Քու ծառայիդ իմաստուն սիրտ տուր, որ Քու ժողովուրդդ դատէ և բարին ու չարը որոշէ, քանզի այս Քու մեծ ժողովուրդդ ո՞վ կրնայ դատել»։

| ԿԻՐ. SUN. | ԲՇ. MON. | ԳՇ. TUES. | ԴՇ. WED. | ԵՇ. THR. | ՈՒՐ. FRI. | ՇԲ. SAT. |
|---|---|---|---|---|---|---|
| | | | 1 | 2 | 3 | 4 |
| 5 | 6 | 7 | 8+ | 9 | 10 | 11+ |
| 12 | 13 | 14 | 15 | 16+ | 17 | 18+ |
| 19 | 20 | 21 | 22 | 23 | 24 | 25+ |
| 26 | 27 | 28 | 29 | 30 | 31 | |

### ՇԱԲԱԹԱԿԱՆ ՄՏԱԾՄՈՒՆՔԻ ՆԻՒԹԵՐ

— «Իմաստութեան սկիզբը Տէրոջը վախն է»։ Առակ. Ա. 7։
— «Յիսուս կը զարգանար իմաստութիւնով ու հասակով»։ Ղուկ. Բ. 52։
— «Ես ձեզի բերան և իմաստութիւն պիտի տամ»։ Ղուկ. ԻԱ. 15։
— «Քրիստոս Աստուծոյ զօրութիւնն ու Ած. յ իմաստութիւն»։ Ա. Կորն. Ա. 22։

### ԻՄԱՍՏՈՒԹԵԱՆ ԱՐԺԷՔԸ

«Իմաստութիւնը ոյժէն աղէկ է»։ Ժող. Թ. 16։
« » պատերազմի զէնքերէն աղէկ է»։ Ժող, Թ. 18։
« » զուտ ոսկիով չառնուիր»։ Յոբ ԻԸ. 15. 17։
« » Թանկագին քարերով չփոխուիր»։ » » 16։
«Բուստն ու բիւրեղը անոր քով չյիշուիր»։ » » 18։
«Յակինթներու գինէն աւելի բարձր է»։ » » 18։
«Եթովպական Տպազիոնի գինը անոր չհասնիր»։ » » 19։

### ԿՐՕՆ. ԵՒ ԱԶԳ. ՏՕՆԵՐ

5. Ջերմ. իջանէ ի հողն
8. Ընդհ. Աւետ. կանանց միութիւն
11. Սբ. Յովհ. Կարապետին
11 - 17. Պառաւանց ցուրտ
16. Միջինք պահոց
18. Սրբ. 40 մանկանց
24. Օր զերեզմանոցի յԱմերիկ.
25. Մուտն ի վերայն կամ աւետի օր
26. Սէֆէր (29 օր)

# ՆԱԶՈՎՐԵՑԻ ՅԻՍՈՒՍ

*(Հռովմի Վատիկանի մէջ գտնուած ձեռագիր պաշտօնագրէ մը, Պիղատոսէն Տիբերիոս Կայսեր գրուած:)*

. . . Անոնցմէ հատնող տարաձայնութեանց մէջ մէկը կար որ մանաւանդ ուշադրութիւնս գրաւեց . . . : Օր մը Սելովամի մօտէն անցած ատենս տեսայ որ հոն հոծ բազմութիւն մը հաւաքուած էր. խումբին մէջտեղ երիտասարդ մը նշմարեցի որ ծառի մը կռթնած՝ հանդարտօրէն ժողովուրդին կը խօսէր: Ինծի ըսին թէ Անիկա Յիսուսն է: . . . Մեծ էր Իր և Իրեն մտիկ ընողներուն միջև տարբերութիւնը: Իր ոսկեգոյն մազերն ու մօրուքը Իրեն երկնային երեւոյթ կուտային: Նա 30 տարեկան ըլլալ կը թուէր: Անկէ անոյշ և լուրջ դէմք մը երբեք տեսած չեմ: Իր և Իրեն մտիկ ընող սև մօրուքներուն և խարտեաշ դէմքերուն միջև եղած հակադրութիւնը խիստ մեծ էր: . . . Շատ չանցած պալատս պաշարուած միջնաբերդի մը կերպարանքը առաւ: Դռնապաններուն թիւը վայրկեանէ վայրկեան կ'աւելնար: Երուսաղէմ՝ Նազարեթի լեռներէն եկող բազմութիւնով կը յորդէր: Կարծես թէ ամբողջ Հրէաստան նուիրական քաղաքը կը թափէր: . . . Մեծ քաղաքական խռովութեանց մէջ բազմութեան մոլեգին կատաղութիւնը շատ տեսած եմ, բայց այս պարագային տեսածիս հետ բաղդատելով անոնք ոչինչ էին: . . . Պալատիս դռներէն մինչև Սիոն լեռը ինքնիրեն կը տարուէր, ու այնպիսի առնացումով և աղաղակով որ ոչ Բանախոյի դաւադրութեան մէջ լսուած է և ոչ ալ առաջնի խռովութեանց մէջ: Աստիճանաբար օրը ձմրան մթնշաղին պէս խաւարեցաւ, ինչպէս տեսնուած է Յուլիոս Կեսարի մահուան ատեն, որ նմանապէս Մարտ 15 ի առտուներն էր: Ես դեռ ապստամբ գաւառի մը կուսակալը՝ պալատիս սիւներէն մէկուն կռթնած, տխրամած խաւարին մէջէն կը մտածէի թէ այս ամենակի աստուածները անմեղ Նազովրեցին մահացնելու կը տանէին: Շուրջս մէկը չկար . . . մինակ մնացած էի: . . . Գողգոթայէն բարձր աղաղակ լսեցաւ, որ հովերու միջոցաւ այնպիսի հառաչանք կը յայտարարէր որ մահկանացու ականջներ երբեք լսած չէին: Տաճարի գմբէթին վրայ սև ամպեր իջան, ու վարագոյրի մը պէս քաղաքը ծածկեցին: Թէ երկինք և թէ երկրի վրայ տեսնուած նշանները այնքան ահռելի էին որ, կ'ըսուի թէ Արիսպագեցի Դիոնէսիոս աղաղակած է, «Կամ բնութեան Հեղինակը կը չարչարուի, և կամ տիեզերքը կը փլչի . . .»:

Տրտում տխուր ատեններ վերադարձայ . . . Նոյն րոպէին Անտոնեան եղանակը զարնող արտափողերու ձայնը ականջս հասաւ: Աչքերս վերցնելով դէպի կայսերական դուռ, խումբ մը զօրքեր տեսայ և հեռուէն կայսեր քայլերգը զարնող ուրիշ փողեր լսեցի: Ինծի խոստացուած օգնական զօրքերն էին— 2000 ընտրեալ զինուորներ, որոնք շուտ հասնելու համար ամբողջ գիշերը քալած էին: Ձեռքերս սեղմելով աղաղակեցի, «Ճակատագրին որոշումն է եղեր որ անօրէնութիւնը կատարուի, և երէկուան արարքը արգիլելու համար զրկուած գունդերը ԱՅՍՕՐ հասնին: Անգութ ճակատագիր, մահկանացուներու գործերուն մէջ ի՛նչ խաղեր կը խաղաս»: Խաչին վրայ գալարած ատեն, Նազովրեցիին բառը խիստ ճշմարիտ էր, «Ամէն բան կատարուեցաւ»:

# ԱՊՐԻԼ 1939 APRIL

### ԱՂՕԹՔ

ԴԱՒԻԹ ՄԱՐԳԱՐԷԻ — «Ո՜վ Տէր, Քու առջի դատաստաններդ յիշեցի, ու մխիթարուեցայ։ Սոսկումը բռնեց զիս այն ամբարիշտներուն համար որ Քու Օրէնքդ կը թողուն։ Ով Տէր, գիշերը Քու անունդ յիշեցի և Քու Օրէնքդ պահեցի»։ Սաղմ. ՃԺԹ. 54. 55։

| ԿԻՐ. SUN. | ԲՇ. MON. | ԳՇ. TUES. | ԴՇ. WED. | ԵՇ. THR. | ՈՒՐ. FRI. | ՇԲ. SAT. |
|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | 1 |
| 2++ | 3 | 4 | 5 | 6++ | 7++ | 8 |
| 9++ | 10 | 11 | 12 | 13 | 14 | 15* |
| 16 | 17 | 18 | 19 | 20 | 21 | 22+ |
| 23 \| 30 | 24* | 25 | 26 | 27 | 28 | 29 |

### ՇԱԲԱԹԱԿԱՆ ՄՏԱԾՄՈՒՆՔԻ ՆԻՒԹԵՐ

— «Բոլոր Գիրքը Աստուծոյ շունչն է և օգտակար սորվեցնելու»։ Բ Տիմ. Գ. 16։
— «Անոր Որդւոյն Յս. Քս. ի արիւնը մեզ ամէն մեղքէ կը սրբէ»։ Ա. Յովհ. Ա. 7։
— «Այն է ճշմարիտ Աստուած ու յաւիտենական կեանք»։ Ա. Յովհ. Ե. 20։
— «Երանի անոր որ Իմ վրայովս չգայթակղիր»։ Մատթ. ԺԱ. 6։

### ԱՐԴԻԱԿԱՆՆԵՐՈՒՆ

«Այն օծութիւնը որ ունիք Իրմէն... պէտք չէ որ մէկը սորվեցնէ ձեզի»։ Ա. Յովհ. Բ. 21։
«Ս. Հոգին՝ որ Հայրը Իմ անունովս ձեզի պիտի ղրկէ, Ան պիտի սորվեցնէ...»։ Յովհ. ԺԴ. 26։
«Երբ ճշմարտութեան Հոգին գայ ամէն ճշմարտութեան պիտի առաջնորդէ ձեզի»։ » ԺԶ. 13։
«Ինչպէս որ նոյն օծութիւնը կը սորվեցնէ... անոր մէջ կեցէք»։ Ա. Յովհ. Բ. 27։
«Այն Աւետարանը... մարդու բան չէ, հապա Յս. Քս. ի յայտնութենէն»։ Գաղ. Ա. 11։
«Եթէ մենք կամ հրեշտակ մը գայ աւետարանէ ձեզի տարբերը... նզովեալ ըլլայ»։ Գաղ. Ա. 8։

### ԿՐՕՆ. ԵՒ ԱԶԳ. ՏՕՆԵՐ

2. Ծաղկազարդ
6. Ոտնլուայ եւ
» Տէրունական Ընթրիք
7. Օր Չարչարանաց Քս. ի
» Ազատ. գերեաց յԱմերիկա
9. Զատիկ Սբ. Յարութեան
15. Հ. Բ. Ը. Մ. (1909)
22. Գլխատումն Յովհ. Մկրտչի
24. Սգաւոր ընդհ. նահատակաց
« Րէպ իլ էվվէլ (30 օր)

# ՄԱՅԻՍ 1939 MAY

## ԱՂՕԹՔ

*ՇԱՐԱԿԱՆԷՆ— «Զի Դու, Տէր Ամենակալ, գիտես զպէտս մեր և կարիս մեր, առաւել քան զոր խնդրեմք և իմանանք, եւ Քեզ ընդ Որդւոյ, Ամենասուրբ Հոգւոյդ վայելէ, փառք, իշխանութիւն և պատիւ այժմ և միշտ...։ Ամէն»։*

| ԿԻՐ. SUN. | ԲՇ. MON. | ԳՇ. TUES. | ԴՇ. WED. | ԵՇ. THR. | ՈՒՐ. FRI. | ՇԲ. SAT |
|---|---|---|---|---|---|---|
| | 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 |
| 7+ | 8 | 9 | 10 | 11 | 12 | 13 |
| 14* | 15 | 16 | 17 | 18++ | 19 | 20 |
| 21 | 22 | 23 | 24 | 25 | 26 | 27 |
| 28++ | 29 | 30 | 31 | | | |

## ՇԱԲԱԹԱԿԱՆ ՄՏԱԾՄՈՒՆՔԻ ՆԻՒԹԵՐ

— «Զօրացուր, ով Աստուած, այս բանը զոր մեզի համար ըրիր»։ Սաղմ. Ը. 4։
— «Քեզ փնտռողները իմ պատճառաւ ամօթով չըլլան...։ » ԿԹ. 18։
— «Պիտի չմեռնիմ, հապա պիտի ապրիմ ու Տէրոջը գործերը պիտի պատմեմ»։ Սղմ. ՃԺԸ. 17։
— «Տէրը զիս շատ խրատեց, բայց մահուան չմատնեց զիս»։ » » 18։

## ՄԱՐԴԿՈՒԹԵԱՆ ՀԱՐՑԸ ԱՌ ԱՍՏՈՒԱԾ

«Մարդը ի՞նչ է որ զայն կը յիշես»։ Սաղմ. Ը. 4։
«Մենք ինչո՞ւ չկրցանք հանել»։ Մատթ. ԺԷ. 10։
«Ո՞ւր երթամ Քու երեսէդ»։ Սաղմ. ՃԼԹ. 7։
«Տէր, որո՞ւ պիտի երթանք»։ Յովհ. Զ. 69։
«Րաբբի, ո՞ւր է Քու օթեւանդ»։ » Ա. 38։
«Տէ՛ր, ի՞նչ ընեմ որ փրկուիմ»։ Մարկ. Ժ. 17։
«Վարդապետ, հոգ չէ՞ որ կը կորսուինք»։ » Դ. 38։

## ԿՐՕՆ. ԵՒ ԱԶԳ. ՏՕՆԵՐ

1. Մանուկներու օր յԱմերիկա
7. Տօն Երեւման խաչի
9. Մայրերու օր յԱմերիկա
14. Ժան Տ'արք (Ֆրնս.)
18. Համբարձում
24. Օր գերեզմանոցի յԱմերիկա
24. Րէպ իւլ Ախըր (29 օր)
28. Անկախ. Հայաստ. (1918)
28. Հոգեգալուստ

# ՅՈՒՆԻՍ 1939 JUNE

### ԱՂՕԹՔ

ԹՈՎՄԱՍ ԳԵՄԲԱՑԻՆ — «Երկնից մէջ ու երկրի վրայ սիրելէ աւելի գեղեցիկ բան չկայ, քանզի սէրը Քեզմէ կը ծնի, եւ Քեզմէ զատ չկայ ուրիշ մը որ կարենայ հանգիստ տալ խռով հոգիիս։ Շնորհէ ինծ, Հայր, որ իմ անձէս աւելի Քեզ սիրեմ, և անձս սիրեմ միայն Քեզի համր.»։

| ԿԻՐ. SUN. | ԲՇ. MON. | ԳՇ. TUES. | ԴՇ. WED. | ԵՇ. THR. | ՈՒՐ. FRI. | ՇԲ. SAT. |
|---|---|---|---|---|---|---|
| | | | | 1 | 2 | 3+ |
| 4+ | 5+ | 6 | 7 | 8 | 9 | 10+ |
| 11*+ | 12 | 13 | 14 | 15 | 16 | 17+ |
| 18 | 19 | 20 | 21 | 22 | 23 | 24 |
| 25+ | 26 | 27 | 28 | 29 | 30 | |

### ՇԱԲԱԹԱԿԱՆ ՄՏԱԾՄՈՒՆՔԻ ՆԻՒԹԵՐ

— «Օրինաց գիրքը բերնէդ չզատուի, գիշեր ու ցորեկ անոր վրայ մտածես»։ Բ Օրին. Ա. 8։
— «Քու ամէն պատուիրանքներդ պիտի ընենք, ուր որ մեզ ղրկես պիտի երթանք»։ Յես. Ա. 16։
— «Քու կանոններդ ինծի երգեր եղան իմ պանդխտութեանս տան մէջ»։ Սաղմ. ՃԺԹ. 54։
— «Արդարներուն բնակարաններուն մէջ ցնծութեան և փրկութեան ձայն կայ»։ » ՃԺԸ. 15։

### ԱՍՏՈՒԱԾԱՅԻՆ ՀԱՐՑԵՐ

«Մարդիկ ի՛նչ կ՚ըսեն թէ եմ ես Որդին մարդոյ»։ Մատթ. ԺԶ. 13։
«Եթէ ես Հայր եմ, իմ պատիւս ո՞ւր է։» Մաղ. Ա. 6։
«Ինչո՞ւ զիս Բարի կ՚անուանես»։ Մատթ. ԺԹ. 17։
«Կրնա՞ք խմել այն գաւաթը որ ես պիտի խմեմ»։ » Ի. 12։
«Ընկեր, ինչո՞ւ համար հոս եկար»։ » ԻԶ. 51։
«Զիս ինչո՞ւ կը փնտռէք»։ Ղուկ. Բ. 48։
«Ինչո՞ւ զիս կը հալածես»։ Գործք. Թ. 4։

### ԿՐՕՆ. ԵՒ ԱԶԳ. ՏՕՆԵՐ

3. Սբ. Եղիա մարգարէի
4. Սրբ. Հռիփսիմեանց
5. Սրբ. Գայիանեանց
10. Տօն Կ.աթ. Եկեղեց. Էջմիածնայ
11. Տրդրծ. Հանր. Ռուբինոյ
» Ելն ի վիրապն
» Հայրերու օր յԱմերիկա
17. Մեծն Ներս. Հայրապ.
18. Բարեկ. Գր. Լուսաւորչի
22. Ճէմ. էվվէլ ( 30 օր )
25. Տօն Կ.աթ. Եկեղեցւոյ

# ԿՐՕՆԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

— 2 Երկլիոն կը հաշուի աշխարհի ներկայ բնակչութիւնը, որոնց

475 միլիոնը Կաթոլիկ են,
205 » Բողոքական,
350 » Կոնֆիւկիոս և Թաօիզմ,
210 » Մահմետական,
230 » Հնդիկներ,
150 » Պուտտայական,
16 » Հրեաներ,
364 » Այլ կրօններ։

---

— ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՈՂՈՔԱԿԱՆՈՒԹԻՒՆ

23,297 ժող. եկեղեցի և մատուռներ կան՝ 2,231,731 անդամներով և
2,046,827 Կիրակնօրեայ դպրոցի աշակերտներով (երկսեռ)։
5,310 Յարանուանական եկեղեցիք կան Միացեալ Նահանգաց մէջ.
7,327 » » » Գանատայի մէջ.
3,478 » » » Անգլիոյ մէջ.
163 » » » Սկովտիոյ մէջ.
86 Եկեղեցիներ կան Թուրքիոյ, Սուրիոյ և Յունաստանի մէջ 4,291 անդամներով և 6,262 Կիրակնօրեայ դպրոցի աշակերտներով։

---

— 1873 ին 1,093 ժող. եկեղեցիներ կային արկն. 1,978,365 Տլ. եկամուտով,
1916 » 5,064 » » » » 10,865,414 » »
1926 » 4,648 » » » » 22,104,535 » »
1933 » 4,796 » » » » 13,420,466 » »

---

— 1934 ին Հայաստանի մէջ կար —

748 Նախակրթարաններ՝ 82,963 աշակերտներով,
327 Միջնակարգ վարժարաններ՝ 100,582 »
45 Բարձր » 22,240 »
16 Վարժապետանոցներ՝ 1,891 Ուսանողներով
1 Համալսարան՝ 625 »

---

— Տակաւին 6 միլիոն գերիներ կան, գլխաւորաբար Եթովպիոյ, Լիպերիոյ, Չինաստանի և Մահմետական հեռաւոր երկիրներու մէջ, և թէ տարեկան 2000 գերի Ափրիկէէն Արաբիա կը փոխադրուին ծախուելու համար։

Նիւ Եօրքի Հայ Աւետ. Եկեղեցւոյ Թերթիկէն

## ՅՈՒԼԻՍ 1939 JULY

### *ԱՂՕԹՔ*

*ՍԲ. ՕԳՈՍՏԻՆՈՍԻ — «Լայնցուր մեր անձուկ հոգիները, որ Դուն կարող ըլլաս մտնել անոնց մէջ և հոն բնակիլ։ Նորոգէ մեր մեղսալից սրտերն և Դուն գրաւէ զանոնք... լսէ մեզի, ո՛վ մեր երկնաւոր Հայրը, Միածին Որդւոյդ Յս. Քս. ի սիրոյն համար։ Ամէն»։*

| ԿԻՐ. SUN. | ԲՇ. MON. | ԳՇ. TUES. | ԴՇ. WED. | ԵՇ. THR. | ՈՒՐ. FRI. | ՇԲ. SAT. |
|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | 1 |
| 2 | 3 | 4 * + | 5 | 6 | 7 | 8 |
| 9 | 10 | 11 | 12 | 13 | 14 * | 15 |
| 16 + | 17 | 18 | 19 | 20 | 21 | 22 + |
| 23 / 30 | 24 / 31 | 25 | 26 | 27 | 28 | 29 |

### *ՇԱԲԱԹԱԿԱՆ ՄՏԱԾՄՈՒՆՔԻ ՆԻՒԹԵՐ*

*— «Իմ աչքերս Քու խօսքիդ համար կը նուաղին... ե՞րբ պիտի մխիթարես զիս»: Սղմ. ՃԺԹ. 82։*
*— «Քիչ մնաց որ զիս կորսնցնեն... բայց ես Քու հրամաններդ չթողուցի»։ » » 87։*
*— «Որչափ կը սիրեմ Քու Օրէնքդ, այն է ամէն օր իմ մտածմունքս»։ » » 97։*
*— «Քու խօսքդ խիստ մաքուր է, ատոր համար Քու ծառադ զանիկա կը սիրէ»։ » » 140։*

### *«ՄԻՆՉԵՒ Ե՞ՐԲ» ՄԱՐԴԿՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԷՆ*

*«Մինչև ե՞րբ նախատինք պիտի ընէ նեղիչը»։ Սաղմ. ՀԴ. 10։*
*» » ժողովուրդը սուգ պիտի ընէ»։ Երեմ. ԺԲ. 4։*
*» » հանգարտ չես կենար ով Տէրոջը սուրը»։ » ԽԷ. 6։*
*» » պիտի ըլլայ այս բաներուն վախճանը»։ Դան. ԺԲ. 6։*
*» » զմեզ տարակուսանաց մէջ պիտի թողուս»։ Յոբ Ժ. 24։*
*» » մեր արեան վրէժը չես պահանջեր»։ Յայտ. Զ. 10։*
*» » ով, Տէր, Քու անձդ պիտի պահե՞ս»։ Սաղմ. ՁԹ. 46։*

### *ԿՐՕՆ. ԵՒ ԱԶԳ. ՏՕՆԵՐ*

4. Անկախութ. Մ. Նահանգաց
4. Դանիէլի եւ երից մանկանց
14. Անկախութ. Ֆրանսայի
16. Տօն Վարդավառին (Այլակերպ.)
22. Մուտն ի վիրապն
» Ճէմ. Ախըր (29 օր)

| ՕԳՈՍՏՈՍ | 1939 | AUGUST |
|---|---|---|

### ԱՂՕԹՔ

ԵՐԱԶՄՈՍ — «Տուր, Տէր, որ Քեզմով լուսաւորուած՝ քալենք Քու առջեւդ անսայթաք, որպէս թէ ցորեկի մէջ, եւ խաւարին գործերէն ազատուած՝ կարող ըլլանք աճիլ ու զօրանալ միշտ պատրաստուած բարի գործերուն մէջ, յանուն Յիսուսի: Ամէն»:

| Կ.Ր. SUN. | Բ.Շ. MON. | Գ.Շ. TUES. | Դ.Շ. WED. | Ե.Շ. THR. | ՈՒՐ. FRI. | ՇԲ. SAT. |
|---|---|---|---|---|---|---|
| | | 1 | 2 | 3 | 4 | 5 |
| 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12+ |
| 13+ | 14 | 15 | 16 | 17 | 18 | 19 |
| 20 | 21 | 22 | 23 | 24 | 25 | 26+ |
| 27 | 28 | 29 | 30 | 31 | | |

### ՇԱԲԱԹԱԿԱՆ ՄՏԱԾՄՈՒՆՔԻ ՆԻՒԹԵՐ

— «Եզը իր տէրը կը ճանչնայ ու էշը իր տիրոջը մսուրը, բայց Իսրլ. զիս չճանչնար»: Ես. Ա. 3:
— «Ո՞վ պահանջեց ձեզմէ որ այսպէս իմ սրահներս կոխէք»: Եսա. » 2:
— «Չարութիւն գործելէ դադրեցէք, բարութիւն ընել սորվեցէք»: » » 17:
— «Եկէք Եհովայի լեռը ելլենք... որպէսզի մեզի Իր ճամբաները սորվեցնէ»: » Բ. 3:

### «ՄԻՆՉԵՒ Ե՞ՐԲ» ԱՍՏՈՒԾՈՅ ԿՈՂՄԷՆ

«Մինչեւ ե՞րբ իմ փափաքս ամօթի պիտի դարձնէք»: Սաղմ. Ժ. 2:
» » անիրաւութեամբ պիտի դատէք»: » ԺԲ. 2:
» » անմտութիւն պիտի սիրէք»: Առակ. Ա. 22:
» » դրօշը պիտի տեսնէք»: Երեմ. Դ. 22:
» » այս ժողովուրդը զիս պիտի արհամարհէ»: Թու. ԺԴ. 11:
» » երկու մտքի վրայ պիտի կաղաք»: Գ Թագ. ԺԸ. 21:
» » ձեզի պիտի համբերեմ»: Մատթ. ԺԷ. 16:

### ԿՐՕՆ. ԵՒ ԱԶԳ. ՏՕՆԵՐ

12. Նիկիա. ժող. (200 հայրապետաց)
» Տօն Շողակաթ Էջմիածնայ

13. Տօն Վերափոխման

21. Րէճէպ (30 օր)
26. Թովմ. Առաքեալ

# ՍԵՊՏԵՄԲԵՐ 1939 SEPTEMBER

## ԱՂՕԹՔ

ՇԱՐԱԿԱՆԷՆ.— «Զօրացո զմեզ, ով Տէր, զօրութեամբ Հոգւոյդ, պահեա զմեզ որպէս բի-
րական, և այսօր առ մեզ նշան բարի ի փառաբանութիւն անուանդ Քում սրբոյ...։ Ամէն»։

| ԿԻՐ. SUN. | ԲՇ. MON. | ԳՇ. TUES. | ԴՇ. WED. | ԵՇ. THR. | ՈՒՐ. FRI. | ՇԲ. SAT. |
|---|---|---|---|---|---|---|
| | | | | | 1* | 2 |
| 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9+ |
| 10 | 11 | 12 | 13 | 14 | 15 | 16 |
| 17+ | 18 | 19 | 20 | 21 | 22 | 23 |
| 24 | 25 | 26 | 27 | 28 | 29 | 30+ |

## ՇԱԲԱԹԱԿԱՆ ՄՏԱԾՄՈՒՆՔԻ ՆԻՒԹԵՐ

— «Մեր տարիները ցնորքի պէս կ'անցնենք»։ Սաղմ. Ղ. 9։
— «Այնպէս սորվեցուր մեզի մեր օրերը համրել որ սրտի իմաստութիւն ստանանք»։ » » 12։
— «Նայէ թէ արդեօք չար ճամբու մէ՞ջ եմ, զիս դէպ ի յաւիտ. ճամբան առաջնորդէ»։ » ՃԼԹ. 24։
— «Ուրախացուր մեզ այն օրերուն չափովը որ... չարիք տեսանք»։ » Ղ. 15։

## ՄԱՐԴՈՒՆ ՕՐԵՐԸ

«Օրերս ոստայնանկի կկոցէն արագ կ'անցնին»։ Յոբ Է. 6։
» սուրհանդակէն արագ են»։ » Թ. 25։
» արագնթաց նաւու պէս են»։ » » 26։
» մուխի պէս փճացան»։ Սաղմ. ՃԲ. 3։
» երկնցած ստուերի պէս են»։ » » 11։
«Մեր բոլոր օրերը Քու բարկութիւնովդ կ'անցնին»։ » Ղ. 9։
Անոր բոլոր օրերը վիշտերով... լեցուն են»։ Ժող. Բ. 23։

## ԿՐՕՆ. ԵՒ ԱԶԳ. ՏՕՆԵՐ

1. Ազգ. հերոս Անդրանիկ
» Հանրապ. Լիբանանի

9. Նիկիոյ ժող. (318 հայրապետաց)
17. Տօն խաչվերացի
20. Շապան (29 օր)

24. Ս. Գէորգայ Բարեկեն.
30. » » զօրավարի

# ՍԲ. ԳՐՔԻՆ ՄԷՋ ԳՏՆՈՒԱԾ ԽՈՐՀՐԴԱՒՈՐ "ԵՕԹ"ԵՐԸ

| | |
|---|---|
| 7րդ օր հանգստի | Ծննդ. Բ. 2։ |
| 7 տարի ծառայել | » ԻԹ. 18։ |
| 7 անգամ խոնարհիլ | » ԼԳ. 3։ |
| 7 երինջ | » ԽԱ. 26։ |
| 7 հասկեր | » » »։ |
| 7 տարի առատութիւն | » » 29։ |
| 7 » սով | » » 30։ |
| 7 » ազատ | Ելց. ԻԱ. 2։ |
| 7 օր անխմոր | » ԻԳ. 15։ |
| 7 անգամ սրսկել | Ղեւ. Դ. 6։ |
| 7 անարատ գառ | » ԻԳ. 18։ |
| 7 օր պատարագ | » » 36։ |
| 7 սեղան | Թու. ԻԳ. 1։ |
| 7 զուարակ | » » 1։ |
| 7 խոյ | » » 1։ |
| 7 ազգեր | Բ Օրն. Է. 1։ |
| 7 ճամբայ | » ԻԸ. 7։ |
| 7 Յոբելեան փողերը | Յես. Զ. 4։ |
| 7 օր | » » 4։ |
| 7 շրջան | » » 4։ |
| 7 ցեղ | » ԺԸ. 2։ |
| 7 մաս | » » 5։ |
| 7 բաժին | » » 6։ |
| 7 զաւակ | Ա. Թագ. Բ. 5։ |
| 7 մեռեալ | Բ » ԻԱ. 9։ |
| 7 հազար ընտրեալ | Գ » ԺԹ. 18։ |
| 7 տարեկան | Դ » ԺԱ. 21։ |
| 7 գառ | Բ Մնց. ԻԹ. 21։ |
| 7 նոխազ | » » 21։ |
| 7 իշխան | Եսթ. Ա. 14։ |
| 7 խորհուրդ | Եզր. Է. 14։ |
| 7 նեղութիւն | Յոբ Է. 19։ |
| 7 աղայ | » ԽԲ. 13։ |
| 7 անգամ աղօթք | Սաղմ. ՃԺԹ. 164։ |
| 7 սիւն | Առակ. Թ. 1։ |
| 7 զզուելիք | » ԻԶ. 25։ |
| 7 կնիք | Եսա. Դ. 1։ |
| 7 ձոր | Եսայ. ԺԱ. 15։ |
| 7 օրուայ լոյս | » Լ. 26։ |
| 7 ամիս | Երեմ. ԼԹ. 12։ |
| 7 պալատական | » ԾԲ. 28։ |
| 7 ժամանակ | Դան. Դ. 16։ |
| 7 եօթնեակ | » Թ. 24։ |
| 7 հովիւ | Միք. Ե. 5։ |
| 7 աչք | Զաք. Գ. 9։ |
| 7 ճրագ | » Դ. 2։ |
| 7 խողովակ | » » 2։ |
| 7 չար ոգի | Մատթ. ԺԲ. 45։ |
| 7 նկանակ | » ԺԵ. 34։ |
| 7 զամբիւղ | » » 37։ |
| 7 անգամ ներել | » ԺԸ. 21։ |
| 7 » 70 անգամ ներել | » » 22։ |
| 7 եղբարք | » ԻԲ. 25։ |
| 7 դեւ | Մարկ. ԺԶ. 9։ |
| 7 հոգի | Գործք. Զ. 3։ |
| 7 ազգ | » ԺԳ. 19։ |
| 7 որդի | » ԺԹ. 14։ |
| 7 օր կենալ | » Ի. 6։ |
| 7 րդ Ադամէն | Յուդա 15։ |
| 7 եկեղեցի | Յայտ. Ա. 4։ |
| 7 աշտանակ | » » 13։ |
| 7 աստղ | » » 16։ |
| 7 Հոգիք Աստուծոյ | » Դ. 1։ |
| 7 ղամբար | » Դ. 5. |
| 7 եղջիւր | » » 6։ |
| 7 հրեշտակ | » Ը. 2։ |
| 7 փող | » » 2։ |
| 7 որոտում | » Ժ. 3։ |
| 7 հազար մեռեալ | » ԺԱ. 7։ |
| 7 գլուխ | » ԺԲ. 3։ |
| 7 սկաւառակ | » ԺԵ. 7։ |
| 7 հարուածներ | » » 8։ |
| 7 լերինք | » ԺԷ. 5։ |
| 7 թագաւոր | » » 9։ |

# ՀՈԿՏԵՄԲԵՐ 1939 OCTOBER

### ԱՂՕԹՔ

ԹՈՎՄԱՍ ԳԵՄԲԱՑԻԻՆ. — *«Շնորհ տուր ինձ որ հաւատարմութեամբ կատարեմ սիրոյ պարտքերս թէ անոնց որ ինծի բարիք ըրած են, և թէ անոնց որ ինծի չարիք հասուցած են . . . հետևելով Քու օրինակիդ, յանուն Յիսուսի։ Ամէն»։*

| ԿԻՐ. SUN. | ԲՇ. MON. | ԳՇ. TUES. | ԴՇ. WED. | ԵՇ. THR. | ՈՒՐ. FRI. | ՇԲ. SAT. |
|---|---|---|---|---|---|---|
| 1+ | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 |
| 8 | 9 | 10 | 11 | 12* | 13 | 14 |
| 15 | 16+ | 17 | 18 | 19* | 20 | 21+ |
| 22 | 23 | 24 | 25 | 26 | 27 | 28 |
| 29+ | 30 | 31 | | | | |

### ՇԱԲԱԹԱԿԱՆ ՄՏԱԾՄՈՒՆՔԻ ՆԻՒԹԵՐ

— «Ով կրնայ կայնիլ Քու առջևդ՝ Քու բարկութեանդ ատենը»։ Սաղմ. ՀԶ. 7։
— «Վասնզի Քու բարկութենէդ կը մաշինք և . . . կը խռովինք»։ » Ղ. 7։
— «Կը հատուցանեմ հայրերուն անօրէնութիւնը որդիներուն... որ կ'ատեն Զիս»։ Ելից Ի. 5։
— «Կ'ողորմիմ անոնց մինչև հազար ազգը որ կը սիրեն Զիս»։ » » 6։

### ԱՍՏՈՒԾՈՅ ԲԱՐԿՈՒԹԵԱՆ ՕՐԸ

«Այն օրը Երուսաղէմը բոլոր ժողովուրդներուն ծանր քար պիտի ընեմ»։ Զաք. ԺԲ. 3։
» » ամէն ձի սոսկումով պիտի զարնեմ, և հեծեալը ապշութեամբ»։ » » 4։
» » Յուդայի հազարապետները կրակի վառարանի պէս պիտի ընեմ»։ » » 6։
» » Երուսաղէմի մէջ մեծ ողբ պիտի ըլլայ»։ » » 11։
» » կուռքերու անունները երկրէն պիտի ջնջեմ»։ ԺԳ. 2։
» » մարգարէները մարգարէութիւն ըրած ատեննին պիտի ամչնան»։ » » 4։
» » անոնց մէջ մեծ խռովութիւն պիտի ըլլայ Տէրոջմէ»։ » ԺԴ. 13։

### ԿՐՕՆ. ԵՒ ԱԶԳ. ՏՕՆԵՐ

1. Վարագայ խաչ
12. Հայ մշակոյթի օր

12. Գիւտ Ամերիկայի
16. Ընդհ. Թարգմանչաց մերոց
19. Ռամազան (30 օր)

21. Զորից աւետարանչաց
29, Գիւտ խաչ.

# ՆՈՅԵՄԲԵՐ 1939 NOVEMBER

### ԱՂՕԹՔ

ՆԵՐՍԷՍ ՇՆՈՐՀԱԼԻ.— «Ով Քրիստոս, որ կենդանի կրակ ես, Քու սիրոյդ կրակը որ աշխարհ ձգեցիր, արծարծէ իմ հոգւոյս մէջ ալ, որ այրէ հոգիիս հիւանդութիւնը և մաքրէ խղճմտանքս . . . որ բարի բաներ խորհիմ, խօսիմ և գործեմ առջեւդ։ Ամէն»։

| ԿԻՐ. SUN. | ԲՇ. MON. | ԳՇ. TUES. | ԴՇ. WED. | ԵՇ. THR. | ՈՒՐ. FRI. | ՇԲ. SAT. |
|---|---|---|---|---|---|---|
| | | | 1 | 2 | 3 | 4+ |
| 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11* |
| 12 | 13 | 14 | 15 | 16 | 17 | 18 |
| 19 | 20+ | 21 | 22 | 23 | 24 | 25 |
| 26 | 27 | 28 | 29 | 30 | | |

### ՇԱԲԱԹԱԿԱՆ ՄՏԱԾՄՈՒՆՔԻ ՆԻՒԹԵՐ

— «Ամէն աչք պիտի տեսնէ զԱնիկա և անոնք որ զԱնիկա խոցեցին»։ Յայտ. Ա. 7։
— «Երբ Որդին մարդոյ Իր փառքովը գայ . . . Իր փառաց աթոռը պիտի նստի»։ Մատ. ԻԵ. 31։
— «Ոչխարները Իր աջ կողմը պիտի կայնեցնէ՝ իսկ այծերը ձախ կողմը»։ » » 33։
— «Բայց Որդին մարդոյ երբ գայ, արդեօք հաւատք պիտի գտնէ՞ երկրի վրայ»։ Ղու. ԺԸ. 8։

### ՏԷՐՈՋԸ ԳԱԼՍՏԵԱՆ ՕՐԸ

«Այն օրը Անոր ոտքերը Ձիթենեաց լերանը վրայ պիտի կայնին»։ Զաք. ԺԴ. 4։
» » լոյսը պայծառ կամ աղօտ պիտի չըլլայ»։ » » 6։
» » Երուսաղէմէ կենդանի ջուրեր պիտի ելլեն»։ » » 8։
» » Տէրը մէկ, ու Անոր անունը մէկ պիտի ըլլայ»։ » » 9։
» ձիերու սանձի զանգերուն վրայ ՍՐԲՈՒԹԻՒՆ ՏԵԱՌՆ պիտի ըլլայ»։ » » 20։
» օրը մէյ մըն ալ Տէրոջը տան մէջ Քանանացի պիտի չ'ըլլայ»։ » » 21։

### ԿՐՕՆ. ԵՒ ԱԶԳ. ՏՕՆԵՐ

4. Ամենայն սրբոց
11. Ընդհ. զինադադար

19. Շէվվալ (29 օր)
» Ռամազան պայրամ (4 օր)

20. Յիսնակ. Բարեկենդան
30. Շնորհակալութ. օր յԱմերիկա

# ԴԵԿՏԵՄԲԵՐ 1939 DECEMBER

### ԱՂՕԹՔ

ՇԱՐԱԿԱՆԷՆ — «Քո առատ ողորմութեամբդ մխիթարեա զմեզ ի կեանս յայսմիկ, եւ առաջնորդեա հասո յանձառ երկնային արքայութեանդ, ի փառաբանութիւն եւ ի պատիւ Սբ. Երրորդութեանդ, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից: Ամէն»:

| ԿԻՐ. SUN. | ԲՇ. MON. | ԳՇ. TUES. | ԴՇ. WED. | ԵՇ. THR. | ՈՒՐ. FRI. | ՇԲ. SAT. |
|---|---|---|---|---|---|---|
| | | | | | 1 | 2 |
| 3* | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 |
| 10 | 11 | 12 | 13 | 14 | 15 | 16+ |
| 17 | 18 | 19 | 20 | 21 | 22 | 23 |
| 24/31 | 25++ | 26 | 27 | 28 | 29 | 30 |

### ՇԱԲԱԹԱԿԱՆ ՄՏԱԾՄՈՒՆՔԻ ՆԻՒԹԵՐ

— «Անոր մէջ տաճար չտեսայ, վասնզի Տէր Ած... ու Գառնը. անոր տաճարն են»: Յյտ. ԻԱ. 22:
— «Եւ (փրկուած) ազգերը անոր լոյսովը պիտի քալեն»: » » 24:
— «Ալ բնաւ նզովք պիտի չ'ըլլայ, անոր մէջ պիտի ըլլայ Ածյ. և Գառնին աթոռը»: » ԻԲ. 3:
— «Երանի անոր որ կը պահէ այս Գրքին մարգարէութեան խօսքերը»: » » 7:

### ՀՈՆ՝ ԵՐԿԻՆՔ

«Հոն չարեր մարդ տանջելէ պիտի դադրին»: Յոբ Գ. 17:
» ուժէ ինկածները կը հանգստանան»: » » »:
» բանտարկեալները կը հանգչին»: » » 18:
» չլսուիր հարկապահանջին ձայնը»: » » »:
» ծառան իր տէրոջմէն ազատ է»: » » 19:
» բնաւ անմաքրութիւն պիտի չմանէ»: Յայտ. ԻԱ. 27:
» ալ գիշեր պիտի չըլլայ և ճրագ ու արեւի լոյս . . . »: » ԻԲ. 5:

### ԿՐՕՆ. ԵՒ ԱԶԳ. ՏՕՆԵՐ

3. Որբերու Կիրակի եւ
» Ոսկ. Կիրակի

11. Ս. Յակոբայ բարեկենդան
16. » » (Մծբնայ հայրապետ)

18. Ձիւլ Դատէ (30 օր)
25. Ս. Ծնունդ (Լատ.)

# ԵՐԱՇԽԱՒՈՐՈՒԱԾ ԿՐՕՆՔ ՄԸ ԸՆՏՐԷ

1. ՊՐԱՀՄԻՆԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ կը սորվեցնէ թէ մարդուն փրկութիւնը կու գայ հոգեփոխութեամբ. — մինչ քրիստոնէութիւնը զմեզ Աստուծոյ կը կապէ Քրիստոսով: — «Եթէ մէկը Քրիստոսի մէջ է, անիկա նոր ստեղծուած մըն է»: Բ Կոր. Ե. 17:

2. ՀՆԴԿԱԳԻՏՈՒԹԻՒՆԸ կ՚ըսէ թէ մէկը կրնայ փրկութիւն ապահովել ապաշխարանք ընելով, ուխտագնացութիւնով եւ կերպով մը հոգին համոզելով կամ խաղաղցնելով: — Սակայն քրիստոնէութիւնը կը յայտարարէ թէ «Շնորհքով փրկուած էք դուք հաւատքի միջոցով. եւ այս չէ թէ ձեզմէ է, հապա Աստուծոյ պարգեւն է, չէ թէ գործերէն, որ մէ՛կը չպարծի»: Եփս. Բ. 8:

3. ՊՈՒՏՏԱՅԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ կը սորվեցնէ թէ փրկութեան ճամբան ձեռք ձգելու համար գոյութենէ դադրիլ պէտք է: — Մինչ քրիստոնէութիւնը կ՚աւետէ փնտռել յաւիտենական կեանքը. քանզի Նա ըսաւ. «Այն ամէնը որ կենդանի է եւ Ինծի կը հաւատայ, յաւիտեան պիտի չմեռնի»: Յովհ. ԺԱ. 26:

4. ՉԻՆԱԿԱՆ ՄԷՅ ԿՐՕՆՔԸ կը սորվեցնէ թէ մարդիկ բռնադատելով իրենց ճամբան ձեռք ձգեն, հոգիները կաշառելով: — Մինչ Յիսուս կը դիմաւորէ մեղաւորները առանց դրամի, եւ առանց գնոյ, ըսելով. «Եկէք Ինծի բոլոր յոգնած ու բեռնաւորուածներ եւ Ես ձեզ պիտի հանգչեցնեմ»: Մատթ. ԺԱ. 28: Եսայ. ԾԵ. 1:

5. ԿՈՆՖԻԿԻՈՍՈՒԹԻՒՆԸ կը սորվեցնէ թէ մարդս կարող է ջնջել մեղքը իր բնութենէն: — Աստուծոյ Խօսքը կը բացագանչէ թէ մարդս իր հոգին չի կրնար փրկել: — «Ուրիշ մէկով փրկութիւն չկայ, վասնզի Անկէ զատ ուրիշ անուն մը չկայ . . . որով կարող ըլլանք փրկուիլ»: «Փրկութիւնը մեր Աստուծոյն . . . եւ Գառնուկին»: Գործք. Դ. 12: Յայտ. Է. 10:

6. ԶՐԱԴԱՇՏԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ կ՚ըսէ թէ՝ լաւ գործեր ըրէ, աղօթքներ մատուցանէ, սր. շապիկներ հագիր, եւ սր. կրակը վառուած պահէ քովդ ապահովելու փրկութիւնդ: — Սակայն Աստուած կ՚ըսէ թէ մարդս չկրնար գործերով արդարանալ. եւ Յիսուս կ՚ըսէ. «Ես եմ ճամբան, ճշմարտութիւն եւ կեանքը»: Յովհ. ԺԴ. 6:

(«Յ.Պ.» Դ. Էջ 53. 1929)

# ՄԵԶԻ ԾԱՆՕԹ ԵՂՈՂ ՀԱՅ. ԿՐՕՆ. ԵՒ ՀՈԳԵՒՈՐ ԹԵՐԹԵՐՈՒ ՑԱՆԿԸ

1. «ԱՒԵՏԻՔ» (Հայ Կաթ. Պաշտօնաթերթ) Կրօն. ամսաթերթ Սուրիոյ համար 10 ֆրանք, արտասահման 20 ֆրանք, Հասցէն՝ **"Avedik", Patr. Arm. Catholique, Beyrouth, R. L.**

2. «ԲԱՆԲԵՐ» (Վեր. Ե. Ղազարոսեան) Հոգ. ամսաթերթ, 15 ֆր. կամ 120 սէնթ, Հասցէն՝ **7 Rue Papère, Marseille. France.**

3. «ԿԱՆԹԵՂ» (Հիւս. Ամերիկ. Հայ ազգ. իշխանութեան կրօն. օրկան) Ջրի, Հասցէն՝ **121 Barkley St. Boston Mass. U. S. A.**

4. «Հ. ԿՈՉՆԱԿ» (Վեր. Խ. Պէննէեան) Կրօնագիտական շաբաթաթերթ, 3-5 տլ. Հասցէն՝ **331 Fourth Ave. New york, City. U. S. A.**

5. «ՀԱՍԿ» (Կիլ. Կաթ. պաշտօնաթ. ամսօրեայ), 10 ֆրանք, Հասցէն **Rev. Mensuelle Arm. Cethol. Antilias, Beyrouth, R. L.**

6. «ՄԱՐԱՆԱԹԱ» (Ա. Գ. Սէֆէրեան եղբ.) Հոգ. ամսաթերթ, 125-150 Դ. Ս. Հասցէն՝ **B. P. 303 "Maranatha", Alep, Syrie.**

7. «ՊԱՏԳԱՄԱՒՈՐ» **(J. W. Clapham & B. B. Ajemian)** Հոգ. երկամսեայ և ձրի, Հասցէն՝ **N. E. S. T. P. O. Box 632 Jerusalem,**

8. «ՍԻՕՆ» (Պատր. Պաշտօնաթերթ) Կրօնական ամսաթերթ, 6 շիլին կամ 1.5 տլ. Հասցէ՝ **Patr. Arm. Jerusalem, Palestine.**

9. «Փրկութիւն» (Վեր. Վ. Պ. Թամմիսեան) Հոգ. ամսաթերթ, 1 տլ. Հասցէ, **P. O. Box 2072, Fresno, Celif. U. S. A.**